ՆՈՒԲԱՐ ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

# ԲԱՆԱՍՏԵՂԾ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԸ

Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներից էր Հայկազուն Արքեպիսկոպոս Աբրահամյանը: Ծնվել է Վանում 1906 թ. մայիսի 10-ին, բերդակցի հավատացյալ գյուղացու ընտանիքում, աշխարհական անվամբ՝ Հայկ: Վանի ինքնապաշտպանությունից հետո, 1915 թ. գարնանը, 9-ամյա պատանին իր ծնողների հետ գաղթում է Արևելյան Հայաստան: Նախ հանգրվանում են Արտաշատում, ապա տեղափոխվում Երևան:

1917 թ. ռուսական բանակի առաջխաղացումից հետո մեծաթիվ վանեցիներ վերադառնում են Վան, նրանց թվում նաև՝ Աբրահամյան ընտանիքը: Հաջորդ տարի, սակայն, կրկին գաղթում են Վանից և գալիս-հասնում Պարսկաստան: Գաղթի ճանապարհներին պատանի Հայկը դժբախտություն է ունենում կորցնելու իր ընտանիքի անդամներին և 14 տարեկանում մնում որբ: Գաղթականների հետ գալիս է Բաղդատ և ապաստանում տեղի որբանոցում: Երկու տարի այստեղ մնալուց հետո, 1922 թ., իր տարեկից ու հայրենակից տղաների հետ իրեն էլ ուղարկում են Երուսաղեմ, ուր մեկ տարի տեղի որբանոցում մնալուց հետո, ընդունվում է Սրբոց Հակոբյանց վանքի Ժառանգավորաց Վարժարան: Ավարտելով այն, 1927 թ. ձեռնադրվում է սարկավագ, իսկ 1930-ին դառնում կուսակրոն քահանա և վերանվանվում Տ. Հայկազուն աբեղա:

1930-57 թվականներին Հայկազուն վարդապետը ծառայում է մի շարք վայրերի հայկական եկեղեցիներում. նախ Երուսաղեմի վանքում, ապա Յաֆայի հայոց Ս. Նիկողոս վանքում: 1941 թ. վերադառնալով Երուսաղեմ, վարում է պատասխանատու պաշտոններ տեղի միաբանությունում: 1954 թ. մայիսին ժամանում է Էջմիածին և մասնակցում Գևորգ Զ Ամենայն Հայոց Կաթողիկոսի թաղման արարողությանը: Հաջորդ տարի, սեպտեմբեր ամսին, վերստին գալիս է Էջմիածին և մասնակցում կաթողիկոսական ընտրություններին և այստեղ էլ 1955 թ. հոկտեմբերի 6-ին ձեռնադրվում եպիսկոպոս՝ ձեռամբ երջանկահիշատակ Վազգեն Առաջինի:

Ընդառաջելով Վազգեն Առաջին Կաթողիկոսի հրավերին, Հայկազուն Եպիսկոպոսը գալիս է Մայր Աթոռ Ս. Էջմիածին և Մայրավանքում ստանձնում Հոգևոր Ճեմարանի վերատեսչի, Մայր Տաճարի Լուսարարապետի և միևնույն ժամանակ Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետի պատասխանատու պաշտոնները՝ դառնալով Ամենայն Հայոց Կաթողիկոսի անմիջական աջակիցը, օգնականն ու խորհրդատուն: Ի գնահատություն Մայրավանքում ծավալած արդյունավետ ու բեղուն գործունեության, Հայոց Հայրապետի հմր. 185 կոնդակով 1960 թվականի դեկտեմբերի 4-ին Հայկազուն Սրբազանին շնորհվում է Արքության պատիվը:

Հայկազուն Արքեպիսկոպոս Աբրահամյանը հետագայում ուր որ էլ գնացել ու ծառայել է կամ այցելել ի պաշտոնե, որպես Հայրապետական Պատվիրակ կամ ժողովների ներկայացուցիչ, իր արդյունավետ գործունեությամբ միշտ սիրվել ու հարգվել է ամենուրեք՝ հայ հոգևորականության ու աշխարհով մեկ սփռված մեր ժողովրդի կողմից: Վազգեն Ա Վեհափառ Կաթողիկոսի որոշմամբ 1964-66 թթ.

նշանակվել է Ծայրագույն Արևելքի Հայրապետական Պատվիրակ՝ նստավայր ունենալով Կալկաթան, ուր, բացի ընդարձակ թեմի հոգևոր սպասավորությունից, միևնույն ժամանակ վարել է տեղի Մարդասիրական Ճեմարանի վերատեսչությունն և ուսուցչական պաշտոնը՝ դասավանդելով մի քանի առարկաներ:

Հայ եկեղեցու քուն ու դադար չունեցող այս հոգևոր սպասավորը երկար տարիների շատ արժեքավոր իր օրագրություններն է թողել, որոնք առանձնակի արժեք ունեն հնդկահայ գաղութի պատմության և մի շարք այլ բնագավառների համար: Այս երկու ձեռագրերը, նո. նո. 661 /1965/ և 662 /1966/, պահվում են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ձեռագրատանը և միասնաբար ունեն 1395 էջի հասնող ծավալ, մանրատառ գրությամբ:

Հայկազուն Արքեպիսկոպոսի ունեցած բոլոր պաշտոններից բացի, որպես հոգևոր սպասավոր, մանկավարժ, լուսարարապետ, քարոզիչ, Հայրապետական Պատվիրակ, ձեռագրի գրիչ և այլն, վերոհիշյալ երկու մատյաններից պարզվում է, որ նա ունեցել է նաև բանաստեղծի բնատուր ձիրք: Ստորև ներկայացնում ենք իր գործերից մի քանիսը դասական ուղղագրությամբ՝ ըստ բնագրի: Վերոհիշյալ երկու ձեռագրերից բացի, Մայր Աթոռի ձեռագրատանը պահվում են նաև Հայկազուն Արքեպիսկոպոս Աբրահամյանի մյուս գրական աշխատանքները՝ թվով 12 /նո. նո. 621-632/:

Նա միշտ սիրված ու հարգված է եղել Երուսաղեմում, Էջմիածնում, Հնդկաստանում և այլուր, ուր որ էլ այցելել է իր կյանքում, իր հոգևոր սպասավորության ժամանակ, ում հետ որ շփվել և տեսակցել է: Նա ուներ քաղցր լեզու, բարի հոգի և մարդամոտ բնավորություն: Միշտ օգնել է իրեն դիմողներին: Նա միշտ սիրված էր Մայրավանքի հոգևորականության ու պաշտոնեության կողմից:

Հայկազուն Սրբազանը վախճանվեց Մայր Աթոռում 1972 թ. հունվարի 4-ին, 66 տարեկանում, սգի մատնելով Վեհափառ Հայրապետին, վանքի միաբանությանը, պաշտոնեությանը, իր հոգևոր եղբայրներին ու ծանոթներին:

Վաստակաշատ այս հոգևորականի հուղարկավորությունը կատարվեց Ս. Գայանե վանքում, հունվարի 7-ին, Վազգեն Ա Հայրապետի նախագահությամբ: Վեհափառն իր սրտառուչ դամբանականում վախճանյալին բնութագրեց որպես «հավատավոր, բարի, ազնիվ, ծառայասեր, եկեղեցանվեր ու հայրենասեր հոգևորականի»: Նրա բարի անունն ու հիշատակը միշտ անմեռ կմնան իրեն ճանաչողների սրտում:

Ստորև ներկայացնում ենք մի փունջ Հայկազուն սրբազանի չափածո ստեղծագործություններից:

## (ՀՆԴԿԵՐԷՆ ԹԱՂՄԱՆԱԿԱՆ ՔԱՌԵԱԿՆԵՐ)

/Թարգ.՝ Հայկազուն Սրբազանի/

1. Աշխարհի մէջ կայ երկու
Անլուծելի առեղծուած.
Արդեօք որտեղի՞ց եկանք
Եւ վերջ ու՞րտեղ պիտ երթանք...

2. Մենք նետեր ենք վրիպած,
Անհունի մէջ շըպըրտուած,
Զարնւում ենք սարերին
Ու վայր ընկնում, ջախջախւում:

3. Ուխտաւորի Հաւատքով
Եւ սէրուն Հայացքով
Զափել խորքը աշխարհի,
Գտնել իմաստն այս կեանքի:

4. Կեանքը մի ծով է անծիր,
Անվախ սուզուիր, մաքառիր,
Բայց այդ վսեմ պայքարում
Սիրիր մարդկանց անխտիր:

5. Քանի՛-քանի սերունդներ
Մի առաւօտ երևացին
Որպէս չնչին ասուպներ,
Թրռած անհետ գնացին:

6. Այսօր դու ես, վաղը՝ նա,
Ծընեալուց յետ՝ մահը կայ,
Կուզես խնդայ, կուզես լայ,
Փոշիդ անգամ չի մնայ:

7. Աւա՛ղ որքան խաբուսիկ
Յոյսեր ունին այն մարդիկ,
Որ դրամի շընորհիւ
Կուզեն ապրել երջանիկ:

8. Լինել արի և բարի,
Խըղճի դիմաց անթերի,
Հոգու թռիչք և խոյանք՝
Այդ է Աստծուն հաճելի:

9. Ի վերուստ մեզ չի տրուել
Արցունքով կեանքը մաշել,
Հերոս է նա իսկապէս,
Ով որ իր բախտն է կըռել:

10. Մարդս քանի շունչ ունի,
Պէտք է գործի, աշխատի,
Ազգին խղճով խելացի
Անհատներ տայ կորովի:

11. Բայց թող հոգիդ վերանայ,
Աստղերի մէջ արբենայ,
Յետոյ խորունկ հաւատքով
Յաւերժի հետ միանայ:

## ԵՐԱ՛Զ...

*(Հանգուցեալ քրոջս՝ «Զարուհի»-ին)*

Երազիս մէջ դուն այս գիշեր.
Ո՞ր ժամուն էր, ես չեմ յիշեր,
Ճերմակ էիր հագած համակ,
Զըւարթ դէմքով որպէս հրեշտակ...:
Ու գրկիդ մէջ գլուխս առած,
Տաք համբոյրներդ դեռ չը պաղած,
Եղար հրեշտակ, դարձար «մուրազ»,
Ինձի մընաց, պատրա՛նք, երա՛զ...:
Քառասուն եօթ տարիներ վերջ.
Պատկերդ հոգւոյս մէջ դեռ անշէջ,
Կուգաս նորէն, կուգաս ինձի,
Սըրբել արցունք անտէր որբի...:
Տառապանքի ճամբին անծայր
Եղար ինձ հայր, եղար ինձ մայր
Ու պահեցիր կեանքս անվտանգ,
Խուժաններու սուրէն անարգ...:
Ե՞րբ պիտի գաս, քոյր իմ, նորէն

Քո երկնային օթևանէն,
Քեզ հետ առած մեր ծընողքին,
Այցելութեան իրենց որբին....

Կալկաթա, 13 Յունիսի 1965 թ., ի գիշերի:

## ՀԱՅ ՑԵՂԻ ՀԻՆԳ ԱՆՄԱՀ ՀՈԳԻՆԵՐ

Մութ խաւարի ընդերքներէն առկայծուած,
Լոյսի շող մը պահած էր մեզ Ինքն Աստուած.
Երկինք, երկիր, սանդարամետներ դողացին,
Մարդ մը կ'իջնէր երկինքներէն լուսածին:
Ոսկի ուռ մը ձեռքերուն մէջ վիրաւոր,
Կըզարնէր դռներն հոգիներուն սըգաւոր.
Ու դարերու խոր թմբիրէն արթընցած,
Լոյս դէմքերով կ'ողջունէին լուսաբաց:
Արքայ, իշխան, տանուտէր ու հողամշակ,
Իրար խառնած, արյուն, քրտինք ու վաստակ,
Հիմքը դըրին. կամարեցին, ու գմբէթներ խոյացան
Դէպի երկինք, Աստծոյ գահին մօտեցան:
ԵԿԵՂԵՑԻՆ... անմահ ՀՈԳԻՆ իմ ցեղին:

***

Լոյս խորանէն լոյս շողեր ցըրուեցան,
Պալատներէն, երդիքներէն ներս մըտան.
Ըստուերները հին հաւատքին չըքացան,
Սրտերն ամէն նոր սուրբ լոյսով փայլեցան:
Ու դարձաւ սուրբ կրակն անմար ճըրագին,
Հայրը որդւով, Մայր դստերով կաթոգին.
Ծունկ են դըրած առջև սիրոյ խորանին,
Հաւատարիմ իրենց կնքած մեծ Ուխտին:
Ու սըրբութիւն հարկերուն տակ Հայրենի.
Ընտանեկան սուրբ կըրակին օճախի,
Անմահացուց գեղմը ամբողջ պատմութեան,
Պատուախնդիր ընտանեկան Սըրբութեան:
Պատիւ Հայու ԸՆՏԱՆԵԿԱՆ ՍԸՐԲՈՒԹԵԱՆ:

***

Եւ պարմաններ թևերուն տակն անուքի,
Մագաղաթեա գըլաններով գուրգուրոտ,
Կըտրած ճամբայ գիշեր-ցերեկ անօթի,

Կանգ կառնէին Մասիսներու ըստորոտ:
Ու կը բացուին դռներն լուսոյ տաճարին,
Երամ-երամ ներս կը մտնեն լոյսի ծարաւ հոգիներ,
Ըմբոշխնելու լոյսն առկայծուած հանճարին,
Ու այդ լոյսով լուսաւորել հազարներ:
Ու դարերու ոսկի շղթան կ'երկարի,
Երգ շղթունքին, տառն իր սրտին անվարան,
Անգոսնելով վիշտ, տառապանք դարերի,
Հայ մանկտին կերթայ իր Սուրբ Վարժարան:
ՀԱՅՈՒ ԴՊՐՈՑ. երրորդ հոգին հայութեան:

***

Մեր գուսաններ երգովն իրենց անուանի,
Գովք հիւսեցին դիւցազներուն հայրենի.
Որ բոցերու մէջէն ծընած Վահագնի,
Երգն ապրեցաւ դարերու մէջ պանծալի:
Քերթող, գիտուն, պատմագիրներ յոյլ ի յոյլ,
Հոգին հայուն լոյսով դարձրին միաձոյլ,
Ճրագի լոյսով, աղով, հացով անմրուն,
Ոսկեղենիկ դարձաւ լեզուն Աստուածաշունչ:
Ու խօսեցան գիրքերն ամէն հայկեան լեզուով,
Խաւարին դէմ պայքարեցաւ հայն իր հոգւով,
Ճառագայթեց դարերի մէջ լոյս պանծալի,
Լուսաւորեց աշխարհն հայոց իմանալի:
ՀԱՅ ԴՊՐՈՒԹԵԱՆ լոյս փարոսներն իմ ցեղի:

***

Եդեմական աշխարհը մեր արևավառ,
Որ առաջին լըսեց Աստծոյ ձայնին բարբառ,
Դարձաւ դրախտ, Տուն ապաւէն Հայ ցեղին,
Օրհներգութեան Սուրբ Տաճար մը Անեղին:
Դարեր, դարեր վայրագ ցեղերըն ահագին,
Բիրտ, կատաղած, ուժովն իրենց մոլեգին,
Արիւն, աւեր, տարածելով անխափան,
Մեր ողջ աշխարհ դարձաւ հայուն գերեզման:
Բայց Յարութեան սուրբ հաւատքով անսասան,
Գերեզմանէն դէպ երկինքներ անսահման,
Վերընձիւղուեց թարմ ծիլերը հայութեան,
Նոր կեանք առաւ երկիր մեր ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ:
ՆՈՐ ՀԱՅՐԵՆԻՔ, նոր ապաւէն Հայութեան:

Կալկաթա,
7 Սեպտ. 1965